

ՂՐԻՄԻՑ ԴՈՐ ԴԱՄԻՅԱՎԱՆ ԲԵՐՎԱԾ ԲԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՋԵՆՈՎԱՆԻԱՆ ԿԱՄ ԻՏԱԼԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՑ
ԻՐԱՅԱՄ ԲԵԿՈՐՆԵՐԸ

XI—XIII դարերում հայերը բնակություն են հաստատում Ղրիմում։ Իտալացիք Ղրիմի հարավային մասը անվանում էին ծովային Հայաստան—Armenia Maritima:

Ղրիմի հայկական դադուքի մասին հետաքրքիր տեղեկություններ կան նոր նախնիների հիշատակարանում, որը այժմ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

«Հայնժամ զօրացար մեր և բազմացար և շինեցար զղիւղ, և զդաւառս իշխանք և ազնականք ի Խարուսու-բազարին սկսեալ մինչև ի լերինս և ի դաշտս ի արարար վանորհիւր և եկեղեցիոր մինչև Սուրխաթ, Եւ շինեցար տունք հարիւր հազար»¹:

Այս թվերը անշուշտ վերցված են մոտավորապես, բայց անկասկած վկայում են հայերի բազմաբնակությունը Ղրիմում: Կաֆայում աների թիվը ջննդագրության հաշվով եղել է 21 հազար, իսկ բնակչության $\frac{2}{3}$ մասը կազմել են հայերը: Առեւտրի և արդյունաբերության մեջ նրանց տեսակարար կշիռը եղել է ավելի բարձր: Հայ վաճառականության և արհեստավորների համար դա շատ վաստակավոր շրջան էր:

Ջնոներեց ջննդագրության հետ, նրանց հարուստ հանրապետության ուժեղ նավատորմից շտաբանությունների տակ, Ղրիմի հայերը, մասնավորապես կաֆայցիք, արևելքի և արևմուտքի միջազգային առևտրի մեջ բռնել էին առաջնակարգ դիրք: Դրան նպաստում էր և ուլն, որ Սինոպում, Տրապիզոնում, Սև և Միջերկրական ծովերի տնտես-

նյա բաղաբնակում, Մերձավոր արևելքի բոլոր առևտրական կենտրոններում ամենուրեք նստած էին հայ վաճառականները. որոնք օգնում էին զրիմեցիներին, թե ապրանքների ծախելու և յի տեղական ապրանքների ձեռք բերելու գործում:

Կաֆան և Սուրխաթը հայ զբոսայտների կենտրոններից էին: Բազմաթիվ ձեռագրեր վրված են XII դարում, զա Ղրիմի հայ մշակույթի ծաղկման շրջանն էր: Շատ ձեռագրեր հասել են և մեզ, որոնք Ղրիմից տարված լինելով նոր նախնիքան, այժմ տեղափոխված են Հայաստան և պահվում են Մատենադարանում: Ղրիմի հայությունը ջննդագրության առևտրական և մշակութային կապերով սերտորեն կապված էր մայր Հայաստանի և Կիլիկիայի հետ: Ղրիմի հայաց մշակույթը միշտ ենթակա է եղել մայր հայրենիքի և Կիլիկիայի մշակույթի ազդեցությանը: Ջննդագրից Կաֆայում շատ քիչ էին, մշտական աղբյուրների թիվը հազիվ հասնում էր մի քանի հազարի, որոնց մեծ մասը կազմում էին պետական տաշտոնյաները, Իտալացի վաճառականների մեծ մասը կազմում էին, նրանք զալիս էին Ջննդավայից իրենց ապրանքներով, Կաֆայում ծախում, փոխտրենը դնում տեղական շուկայի ապրանքներից և շարունակում իրենց ձանաղարհը:

Ջննդագրից իրենց մշակույթով, նիստ ու կացով, սովորություններով և կենցաղի ձևով տեղական ժողովուրդների հետ շատ քիչ են կապված եղել, շատ քիչ են սովորել նրանց մշակույթի վրա: Հայերը և ջուլները իրենց տնտեսական գործունեության մեջ սերտորեն կապված էին ջննդագրից հետ, իրենց ապրելակերպով և ընտանեկան կարգերով միշտ նրանց հետ: Եւ պահել սովորություններից և մնացել են միշտ օտար: Դրա զխալոր պաաճառը եղել է կաթոլիկ

¹ Խառնեղարան, ձեռագիր № 7442:

Նույնը՝ Տեր-Արսեւիայան, Պատմություն Խրիմու, մասն երկրորդ, Թեոդոսիա, 1865 էջ 184: Մ. Բժկյան, Եանադարձորություն ի Լեւոստան, Վենետիկ, 1830:

եկեղեցին. որը միշտ կամեցել է իրեն հա-
տակեցնել այն և հույն եկեղեցիները. որ
միշտ անբաժանելի է համարել հինավուրց
բրիստոնյա հույն և այն հավատացյալնե-
րին: Դոմինիկյան և ֆրանցիսկյան կարդերի
միսիոներների գործունեությունը միշտ դի-
մադրության է հանդիպել հայերի և հույնե-
րի կողմից, միշտ ատելություն է հարուցել
ղեպի կաթոլիկությունը և խռովություններ
առաջ բերել այն ժողովրդի մեջ: Կաթոլիկ
միսիոներներին զրիմցի հայերն անվանել
են «Սև թաղի» (սև աղվես), իսկ նրանց զոհ
դարձած կաթոլիկ հայերին՝ «Սև թաղի լեշ»:

Այդ է երևի պատճառը, որ մեզ հասած
երկտողի մեջ զրիմցի հայ աղջիկը երգում է.

«Ինչի մի՞ դաք թալիանի (իտալացու—
Խ. Փ.)

Ինչի զվեր հոռոմի: (հույնի—Խ. Փ.)

1204—1475 թվականը, 271 տարի ապ-
րելով իտալացոց հովանավորության տակ,
զրիմցի հայերի լեզուն ևս շատ բիշ է են-
թարկվել իտալական լեզվի ազդեցության,
հազիվ մի քանի տասնյակ իտալական խոս-
քեր մնացել են նոր նախնիների բարբառի
մեջ: Անշուշտ իտալական ծագում ունեն
Գալանդոս (Calendas), Գալաճի (colluqulum-
խոսակցութուն), անտիքա (antiquaria-
հավաքչություն), բուլի (հեղհահալ-la ponle)
սելվի ծառ (silva-անտառի ծառ), Թոռոպառ,
(torus-խոսքից, toro-բարձր տեղ, վերի պա-
ար), սում (sumus), կամպանի տեղ (զլուղի
հող-campagne), մոնո (monus), խանթար,
չինի, ճառիկ, մախարա, ոտբա, գեռաս
(ceras), սենի և այլն:

Հայերը շատ են ազդվել իտալացիներ-
րից նկարչության և գեղարվեստի մյուս
ճյուղերի մեջ: Շատ եկեղեցական պատկեր-
ներ, սրբերի նկարներ պատրաստված են
Ջենովայում: Այդ շրջանի հայ հասարակու-
թյունը անշուշտ ունեցել է իր հարուստ ժո-
ղովրդական բանահյուսությունը, որից մեզ
հասել են միմիայն իտալական ազդեցությու-
նից զուրկ գալանդոս երգի վարիանտները, որ-
ոնք հետագա շրջանում ազդվելով ոտանե-
րից, կրում են ոտանական կնիքը:

Գալանդոսը երգում են տարին մի ան-
գամ, միմիայն նոր տարու օրը: Նոր տարու
օրը տղա երեխաները խումբ-խումբ ման էին
գալիս իրենց ազգականների և ծանոթների

տները. երգում էին և շնորհավորում նոր
տարու գալուստը: Փոխարենը ստանում էին
«կաղանդ» մեղրի մեջ թաթաժ կաղին»,
ընկույզ, շամիչ, անուշեղեններ, խալաճ,
դաթա, սամսա և այլ թխվածքներ:

Այս սովորությունը վերջերս շարաշա-
վում էր: Շատ շահասեր մարդիկ դռնեղուռ
ման դալով փող ու ուտելիքներ էին հավա-
քում, հետո վաճառում:

ԳԱԼԱՆԴՈՍԻ ԵՐԳԵՐ

Տարբերակներով

1 Գալանդոս, դո՛ս, դո՛ս,
Ամեն դարի բարև հասնիք,
Շնորհավոր նոր դարի,
Նոր յանդային դուռ դարի,
Շալե շարիք հարուցի,
Քեմբե կողի դարեցի,
Չայով-փունջով հարդեցի,
Առ բարի,
Դուռ բարի,
Շուտ արի,
Նոր դարի:

2 Գալանդոս, դո՛ս, դո՛ս,
Գալանդոսը կղի է,
Տուռին դադր գայնիլ է,
Շիլա շարիք հարիլ է,
Գարմիր կողի դարիլ է,
Մեղ ալուճին խայիլ է:

3 Գալանդոս, դո՛ս, դո՛ս,
Ամեն դարի պարև հասնիք,
Դունեբոլ, դեղերոլ իլին բա,
Տուռերոլ, շեմերոլ շեն մնա,
Շնավոր նոր դարի,
Նոր յանդային դուռ բարի,
Շալե շարիք հարուցի,
Քեմբե կողի դարեցի,
Խալաճ զվեր:

Գալանդոսը ունի և այլ վարիանտներ,
որոնք բիշ են տարբերվում, ուստի մեջ չենք
բերում:

Մինչև XX դարի սկիզբները հայերը նոր
նախնիներում կաղմում էին մեծամասնու-
թյուն, այնտեղ աղբոռ ոտաներն էլ խոսում
էին հայերեն և գալանդոսն էլ երգում էին
հայերեն: Հետագայում ոտաները, կաղմելով
մեծամասնություն, ստեղծել էին իրենց

տարրերակները, որոնք երգում էին ման
դալով հայերի տները: Ահա ուսական այդ
տարրերակներից մեկը.

Գալանդոս, դո՛ս, դո՛ս,
Շնավոր նոր դարի,
Чи дома, дома
Пан-хозяин дома,
Давай гата, давай самса.
Давай орешки, давай пирожки.

Այս եղանակով գալանդոսի վերջին ուղին,
իսկ 1920 թվականից նա մատնվեց մոռացու-
թյան:

Ջենավական շրջանից մնացած ուրիշ
երգեր մեզ հայանի չեն: Անշուշտ ջենավա-
կան ծաղում ունի՝

Ինձի մի՛ դար թալիանի,
Ինձի զվեք հոռոմի

երգը: Իժմախտարար նրա խոսքերը մեզ
չեն հասել:

ԱՎԵՏԻՄՆԵՐ՝

Ավետիսները կրոնական ուղեկատարու-
թյան, քրիստոսի ծննդյան հետ կապված շը-
նորհավորական երգեր են, որոնք երգվում
էին տարեկան մի անգամ՝ ձրադալույցի ե-
րեկոյան:

Այդ շնորհավորումները որոշ չափով
ստացել էին ծիսակատարական ձև: Ավե-
տիսները շատ հին են: Նրանք անշուշտ Ղրի-
մի գտնվածքները բերել են Մայր Հայաս-
տանից և երգվել են Ղրիմում հայ գաղութի
գոյության ամբողջ ընթացքում: Նոր Նախի-
ջևանի ավետիսները² և Ա.
Մնացականյանի³ հրատարակած ավետիս-
ների վարիանտներն են, որ անհերքելի կեր-
պով ապացուցում է նրանց Հայաստանում
հորինված լինելը: Ղրիմից 1778 թվին ղաղ-
թելով Նոր Նախիջևան, հայերը իրենց հետ
բերին և ավետիսները:

Ղրիմից բերված սովորությունների հա-
մաձայն Նոր Նախիջևանի գյուղերում ե-
րիտասարդությունը ամեն տարի թաթախ-

ման երեկոյան, այսինքն՝ հին տոմարով հուն-
վարի 5-ին, շրջում էր դոնդոռ և երգելով
ավետիսներ, շնորհավորում քրիստոսի ծը-
նունդը: Դա մի պարտադիր սովորություն
էր, տոնակատարության անբաժան մասը:
Ժողովուրդը նախօրոք պատրաստվում էր
տեսնում «ավետիսի տղոցը» ընդունելու հա-
մար: Ամեն մի տուն մասնավորապես նը-
րանց համար թխում էր մի-մի մեծ խալա՜
և դաթաներ՝ շարմուղուն ալյուրից:

Ամեն մի մարդ այդ երեկոյան իր տանն
էր նստում և իր ընտանիքի հետ էր անցկաց-
նում թաթախման երեկոն:

Երիտասարդները, իրենց ընտանիքնե-
րում թաթախման ծեսը կատարելուց հետո
գնում էին «ավետիսի տունը» և այնտեղից,
բաժանվելով 3—4 հոգուց բաղկացած խմբ-
երի, սկսում էին ման դալ տնտեսուն և շը-
նորհավորել քրիստոսի ծնունդը, որի հա-
մար երգում էին մի կամ երկու ավետիս:
Շնորհավորող երիտասարդներին տան տե-
րերը նստեցնում էին սեղան կամ հյուրասի-
րում մի-մի լաժակ դինով կամ օղիով, ու-
տեցնում կաղանդ, կորկոտ և այլն: Բացի
դրանից, ապրիս էին մի «խալա՜», մի քանի
դաթա և մի քանի կոպեկ փող: Այդ նվերնե-
րը տրվում էին թաղական «ավետիսի ստան»
օղաին:

Այս սովորությունը XIX դարում գոյու-
թյուն է ունեցել և բաղաբում, լայց ներկա
դարիս սկզբից մոռացության է մատնվել:

Գյուղերը բաժանվում էին մահալաների
(թաղերի): Խոշոր գյուղերը բաժանված էին
8—9 թաղի: Ամեն մի թաղ ուներ իր «ավե-
տիսի տունը»: Այնտեղ հավաքվում էին ձը-
մնված ամիսների երեկոներին երիտասարդ
«կարիճները» և ժամանակ անցկացնում: Ա-
վետիսի տան անդամները կարող էին լինել
միմիայն չամուսնացած երիտասարդները,
ամուսնությունը դրկում էր նրանց այդ իրա-
վունքից:

Հավաքությունների համար վարձում էին
դարասյ տներ և կամ մեծ սենյակներ:
Կառավարում էին «ավետիսի տները» ընդ-
հանուր ժողովով ընտրված երկու երիտա-
սարդ, որոնք կոչվում էին «միքիթ աղասի-
ներ», իսկ ոմանք ասում էին «միքիթ աղասի-
ներ»:

«Միքիթ աղասիներ» սլարականու-
թյունն էր կառավարել ավետիսի տունը,

² Կ. Կոստանյան, Նոր մոգովածու, Ռիֆլիս, 1883,
պրակ II:

³ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան
ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 329—334:

պահել կարգ ու կանոն, զսպել անկարգ անգամներին, լուծել թաղական երիտասարդության վերաբերող գործերը, հավաքել հարսանիքների ժամանակ իրենց հասանելիք տուրքերը, զատկի տոներին անպատճառ կապել մեծ «սանձախ», օրորել «մահալալի» աղջիկներին, նորահարսներին, ծերերին և այլն:

Ավետիսի տանը սովորեցնում էին նոր անդամներին «ավետիս ասել», «պարեր» (պարերգ) երգել, նոր երգեր երգել: «Միքիթ աղասիները» հրավիրում էին «մասալ» (հեքիաթ) ասողներ, որ առական պատմեն, շառխըմիներ (գուսաններ), որ նվագեն և երգեն: Բարեկենդանի տոներին կազմակերպում էին «կամենդի խաղեր», դիմակավորված ման էին դալիս մահալալի տները: Եկեղեցական ուխտերի ժամանակ մատաղացուի զխին կազմակերպում էին «գուռաշներ», մրցում ուրիշ մահալաների հետ: Հազվող «դուռաշին» զլուխը բերում էր իր մահալալի ավետիսի տունը և ամենքը միասին ուտում էին:

Բոլոր նվեր ստացված իրերը և փողերը հավաքողները հանձնում էին «միքիթ աղասիներին»: «Ավետիսների տները» գործում էին մինչև մեծ տասը, մինչև դարնախառնություն, երբ սկսվում էին դաշտային աշխատանքները:

Տարվա վերջին ընդհանուր ժողովով որոշում էին ինչպես ծախսել հավաքած եկամուտը: Այդ եկամուտներով առհասարակ բարեկենդանի կիրակի օրը սարքում էին բեֆ, որ կոչվում էր «խոնաշմաս»: Վերջին շրջանում սկսել էին այդ փողերը ծախսել կուլտուրական և բարեգործական նպատակներով:

«Ավետիսի տները», կարելի է ասել, իրենց ժամանակվա ակումբներն էին, որոնք չունենալով որսաշահ ղեկավարներ, մտավորականություն, զուրկ էին դադարախաղի և բովանդակությունից: Նրանք շատ հիշեցնում էին Հնաստանի և այլ վայրերի հայ գաղութների մեջ դոյություն ունեցող «Կարիճների եղբայրություն» կոչվող միությունները:

¹ Ա. Կուրճյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, Երևան, 1956, էջ 71 և ուրիշներ:

Երբ նախնական գյուղերում երգվող ավետիսների թիվը վեցն էր, որոնցից «Աստղ մը ելավը» և «Ծրանելին» երգվում էին բոլոր գյուղերում: Իսկ «Ցնծացեք» երգվում էր միայն Թոփտիում, «Հիսուս-հիսուս»՝ միայն Չալթրում, «Խոսքն աստծուն» և «Այսօր տոն է ծննդյան»՝ միմիայն Մեծ Սալայում:

Ամենատարածված ավետիսն էր «Ծրանելին», որն, ինչպես արդեն ասացինք, երգվում էր բոլոր գյուղերում, բայց ամեն գյուղ ուներ իր տարբեր վարիանտը: Մենք մեջ ենք բերում խոշոր գյուղերի՝ Չալթրի և Թոփտիի տարբերակները:

ԶԱԼԹԸՐ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Քեզ երանի, կույս Մարիամ,
Պիտ որ ծնիս աստվածորդին,
Աստվածորդին, հայր և սուրբ հոգին:
Մարիամ բերեց յուր մեկ որդին,
Բերեց իր հետ աշկերտություն,
Մենք գրեցինք Ա, Բ, Գ, Դ,
Նա կրկարդար քերականներ,
Մենք գրեցինք քերականներ,
Նա կրկարդար սաղմոսարան,
Մենք գրեցինք սաղմոսարան,
Նա կրկարդար ավետարան,
Մենք գրեցինք ավետարան,
Նա կրկարդար աստվածություն,
Աստվածարան ու միարան,
Պահիր ամենքիս միարան:
Արեղաներ իրար եկան,
Ցեղաց-ցեղաց կենձեղ արին,
Բարակ և բարակ թուղթ գրեցին
Կույս Մարիամին ուղարկեցին:
— Մարիամ, արի, առ մեկ որդիդ,
Քու մեկ որդիդ, հայր, սուրբ հոգիդ,
Նա մեկ շարով աշկերտություն,
Նա մեկ արավ վարպետություն,
Մարիամ կորույց իր մեկ որդին,
Ին իմեր օր, իմեր դիշեր,
Ին իմեր օրեն և տե
Համբարողներուն հարցունք բրինդ:
Մարիամ, տուր մեկ բարի նշան,

² Առաջին ինչ ավետիսները գեղեցիկ էին մեր նոր նախնիների ժողովրդական բանահյուսությունը՝ աշխատանքի առաջին զխում, որ տպագրված էր «Աղ-դադրական հանդեսի» 1910 թվի XX դրում, էջ 103—107:

Որտեղ տեսանք, բեղ չուն ասինք.
Երուսաղեմը ծեր մը տեսանք,
Խաչ, դավադան ունեք ափին,
Ավետարանն ալ չես գիրկն է:
Անձրե-հաղյալ շալե շապիկ,
Գլխին ի վեր արե ծաղկալ.
Ձեզ ողնական, մեզ պահասական պահիր:
Ամեն տարի բարով հասնիր,
Ձեզ սիրելով, ամենքս միարան:

ԲՈՒՓՏԻ ԳՅՈՒԼԻ ՏԱՐԵԿՐԱԿՆԵՐ

Երանելի կույս Մարիամ,
Որ կույս էիր, կույս ծնեցար,
Սնումը երբեք Աստվածորդին,
Աստվածորդին, այն սուրբ հոգին,
Մարիամ առավ իր մեկ որդին,
Տարավ նրան աշկերտության.
Երբ այրուրեն երբ զրեցին,
Նա կըկարդար սողմոստարան:
Սողմոստարան երբ զրեցին,
Նա կըկարդար շարականներ.
Շարականներ երբ զրեցին,
Նա կըկարդար ավետարան:
Խուց էիր, խուց կենկին շարեն,
Բարեական թուղթ զրեցին,
Կույս Մարիամին դիր խըրկեցին՝
— «Մարիամ արի, առ քու որդին,
«Քու մեկ սրբիդ, այն սուրբ հոգիդ,
«Նա էր տներ աշկերտություն,
«Մեզի կաներ վարդապետություն»:
Մարիամ կորուց յուր մեկ որդին,
Յուր մեկ սրբին, այն սուրբ հոգին,
Փառ կույար, կույար, աղաղակեր,
Համբարաններուն հարցմունք կաներ:
Սայր, մեզի տուր բանիդ նշան,
Որպես տեսնենք, այնպես պատմենք,
Իսկի տեսանք քու մեկ որդիդ,
Քու մեկ որդիդ, այն սուրբ հոգիդ:
Ու ոչ ոսկով եմ ցանկացալ,
Ոչ իմ որդուս եմ ցանկացալ.
Շալե շապիկ ի կույս անձին,
Գլխատարան արեւադույն.
Ու ոչ ոսկով եմ ցանկացալ.
Արծաթի տես պայծառ կենաս:
Մեր մը տեսանք Հերուսաղեմ,
Խաչ դավադան ունեք ձեռքին,
Ավետարանն ահեկ գիրկըն»:

1 Այս երգի մի ալ նոտագրված տարբերակը տե՛ս սույն գրքում, Մ. Լյուկեճյանի ժողովածուն:

Ավետիսները երգելիս ամեն տղից
հետո ավելացնում են «Ավետիս» խոսքը:
Ինչպես տեսնում ենք, երկու տարբերակնե-
րի իմաստը մեկ է, տարբերությունը քիչ:
Արտագրողները, չհասկանալով խոսքերի
նշանակությունը, աղավաղել են, որի հետե-
վանքով ստացվել են զանազան վարիանտ-
ներ:

Ավետիսներն էլ իրենց մեջ ունեն իրենց
կարգերը: «Երանելին» երգվում է ամեն տեղ,
համարվում է հասարակ, սովորական ավե-
տիս: Ամենալավ ավետիսն էին համարում
«Աստղ մը ելավ»: Սա համարվում էր շատ
ինն ավետիս. իսկ այն դիտցողը հաշվում
էր դիտուն մարդ: Այն երգում էին աղաների
և դրազետ մարդկանց տներում: Մեր «պա-
պիկները» այնքան էին սիրում այդ ավետի-
սը, որ եթե ճրագալույցի երեկոյան շնորհա-
վորելու եկած երիտասարդները այն չիմա-
նային, մեղք կհամարեին նրանց ներս հրա-
վիրել և թաթախման սեղանի շուրջը նըս-
տեցնել:

Մերերը իրենք էլ չդիտեին ինչու՞ է հա-
մար այդ ավետիսը այդպես պատվավոր էր.
նրանք ասում էին, որ իրենց երիտասարդու-
թյան ժամանակ էլ ծերերը պահանջել են եր-
գել այն: Հայտնի է առհասարակ, որ ծերերը
միշտ սիրում են անցյալ ժամանակների և
դեպքերի մասին իրենց ունեցած դիտու-
թյամբ մրցման մեջ մտնել երիտասարդների
հետ: «Աստղ մը ելավ» ավետիսն էլ ունի իր
տարբերակները, բայց տարբերությունը նը-
րանց մեջ շատ չնչին է: Օրինակ, Չալթրում
երգում են՝ «Աստղ ելավ ի Հրեաստան», իսկ
Թովմախում՝ «Աստղ մը ելավ արևելքեն» և
այլն:

Իրա համար մեջ ենք բերում միմիայն
Թովմախ գյուղի տարբերակը:

Աստղ մը ելավ արևելքեն,
Իմաստասերը դարհուրեցան,
Աստղաբաշեր ժողովեցան,
Շատ բնեկով, դայն չիմացան:
Յուրյանց մեջ կույր մը դտան,
Թեևն մտած, առին ելան:
Երբ այն աստղն, որ հայեցավ,
Այն կուրացյալ աչրը բացավ:

7 Այդ երգի նոտագրված օրինակը տե՛ս սույն գրք-
քում, Մ. Լյուկեճյանի ժողովածուն:

Եղբայր, սա մեծ աստղն-նշան,
 Քաղալոր ծնյալ, հրեից արքան,
 Մելքոն, Գասպար, Բաղդասար,
 Երեք թագավոր-ազնվականք,
 Խորհուրդ արին յուրյանց մեջ,
 Երթանք, տեսնենք հրեից արքան:
 Շատ հեծելով, ճամբա ելան,
 Աստղն ցուցնեք նոցա ճամբան,
 Ֆերեկը հրեշտակ երևեցավ,
 Գիշերն աստղը լուսնի նման:
 Գնացին ելան շրեաստան,
 Շրեաստան երկիր մտան,
 Հերուսաղեմ քաղաք մտան,
 Վասն այն ճամբույն հույժ տխրեցան,
 Զոր տեսան հարցմունք արին,
 — Ո՞րտեղ ծնյալ հրեից արքան,
 Նոքա տային հարց-պատասխան:
 — Մենք չենք լսել այդպիսի բան,
 Թե իժեք օր, իժեք գիշեր
 Աստղն խարան եղև նոցա,
 Թե իժեք ավուր հետո անց
 Այլուր աստղն երևեցավ:
 Աստղն տեսան, ուրախացան,
 Ի մեջ աստղին կույս մը տեսան,
 Ի մեջ աստղին լուսն ալ տեսան,
 Գնաց այն աստղն կայնեցավ
 Տերուն հերևն լույսի նման:
 Գնացին ելան ի գուռն ալուին,
 Այլուի այն սուրբ անապատին,
 Թե ձեր մտավ յուր տեսության,
 Նու ձեր տեսավ իր նմանին:
 Մանուկ մտավ յուր տեսության,
 Մանուկ տեսավ յուր նմանին:
 Տղան մտավ յուր տեսության,
 Տղան տեսավ յուր նմանին:
 Ելան ասին մեկգմեկու,
 Զրվոյալ լաներս լանյաց,
 Թե երեքն ալ միարան մտան.
 Հիսուս աղան դիրկն կույսին նման,
 Օրորեցին մորը դիրկը.
 Օրոր կուտար սուրբ դավակին,
 Սուրբ կուտական կայաներ բերին
 Հոռոտոյալի լույսի նման.
 Կարհուրեր մորն աղան.
 Բսկի. կնդրուկ, բղմուռս բերին,
 Ըստեղծողին բնծա տվին,
 Նունը դնելով, երկրպագին:
 Այն օր եղած թաղավորին
 Տացցե աշխարհ խաղաղություն,
 Ամեն բարբաջ աղատություն:

Երրորդ ավետիսն է Հիսուս-հիսուսը:
 որ երգվում էր միայն Չալթրը գյուղում: Չալ-
 թրում գոյություն ունեւ մի շատ հինավուրց
 սովորություն: Ճրագալույցի երեկոյան նը-
 շանված տղաները իրենց ընկերների և հա-
 սակակից ազգականների հետ գնում էին նը-
 շանած-հարսնացուների տունը: Հարսնա-
 ցուի ծնողների թույլտվությամբ ներս մըտ-
 նելուց հետո, փեսան շնորհավորելով քրիս-
 տոսի ծնունդը, համբուրում էր հարսնացուի
 ծնողների ձեռքը և ապա կանգնում տան դը-
 ուան շեմի մոտ, մինչև որ տան ավագ ան-
 գամը չէր հրավիրում սեղանի մոտ և թեք
 մտնելով չէր տանում ու նստեցնում վերի
 պատի մոտ, հայելու տակ, կամ ինչպես ա-
 սում են նոր նախիջևանցիք՝ «թոռոպատը»:
 Փեսին «թոռոպատը» նստեցնելուց հե-
 տո տանտիկինը թաքնված տեղից դուրս է
 լերում հարսնացուին, որը խոնարհ ողջու-
 նելով եկվորներին, համբուրում էր նրանց
 ձեռքերը: Սրանից վերջը տան արական ան-
 գամներից մեկը, սովորաբար հարսնացուի
 եղբայրը, եկվորներին հյուրասիրում էր օ-
 դիով և առաջարկում երգել ավետիսը:
 Ահա այստեղ անպատճառ երգում էին
 «Հիսուս-հիսուս» ավետիսը: Ավետիսը եր-
 դուց հետո փեսան իր ծոցից հանում էր
 հարսնացուի և նրա աղջկանների համար
 բերած ընծաները և դնում սեղանի վրա: Ի
 պատասխան դրան հարսի ծնողները իսկույն
 լերում էին փեսայի և նրա աղջկանների
 համար պատրաստած նվերները և իրենց
 ձեռքով մոցեցնում փեսայի ծոցը: Ընծայում
 էին տոհմատարակ «թեոնոփիներ», մետաքս-
 յա շալեր, «փոշիներ», «խումաշ» կտորներ,
 որոնց վրա կարում էին ոսկե դրամներ՝
 «ողածախի», «փիթուն», «տերափ-բյուլիկ»
 և այլն:

Երկար հյուրասիրություն և զվարճանա-
 լուց հետո փեսան և նրա բնկերները սեղանի
 վրա մնացած բոլոր ուտելիքները լցնում են
 իրենց թաշկինակների մեջ և վերցնում հետ-
 ները, իսկ լմակիները շշերով դնում դուր-
 պանները:

Սեղանը փակելով, դարձյալ երգում էին
 մի ուրիշ ավետիս և բարի գիշեր մաղթե-
 լով, վերադառնում փեսայի տուն:

Այս սովորությունը գոյություն ունեւ
 միմիայն Չալթրը գյուղում, որն առհասարակ
 ամուր պահում էր հին սովորությունները:

«Հիսուս-հիսուս» ավետիսը, որպես միայն
մի գյուղում երգվող, վարիանտներ չունի։ Ա-
հա այն.

Հիսուս-հիսուս աշակերտաց,
Վաթսուն և վեց հայրապետաց
Հետ երթային, հետ քարոզելին,
Անկող զլուր լուսավորչին.
Դացին, ելան ի ծայր ծովուն,
Որտեղ կայնած կային նավեր:
Եղբայր ասեք, ելեք նավորդիք,
Կս ձեզ անեմ բաղում աղոթք.
Մեղ չըպիտի բաղում աղոթք,
Մեղ պետք է բաղում դրամ:
Խաչակնքեց, դրամ կազմեց.
Հերիս նավտեր ելան յուր նավ,
Հրաման էին հալման քամու,
Մովը տականց պղտորվեցավ,
Սղբայր, այս ի՞նչ մարդ մեղավոր,
Մարդ մեղավոր, բայց ալեոր.
Նլան 'ի վեր, ընկան 'ի ոտք,
Դուն մեր հիսուս, դուն մեր քրիստոս,
Սղբարք, պահեք, քուն մի եղիք,
Սս ձեզ անեմ բաղում աղոթք,
Թողունք եկան քաղցրադիշեր,
Հավն ալ խոսեց երեք բերան.
Սղբայրք, ելեք անուշ քուններեդ,
Հավար թելեր հաստատեցան,
Օրհնած հիսուս, օրհնած նավորդ,
Օրհնած նավորդիք ցավի իլյաններ.
Ուն ալ տիբոջ արքայություն,
Նա ձեր և մեր մեղոցն թողություն,
Ձեր ծնողաց արքայություն:
Սվ հիսուս է և քրիստոս.
Օրհնած այս տունիս տանուտերեր.
Սվ Պողոս է և Պետրոս է,
Օրհնած այս տունիս կտրիճներ:
Աստված այս տունը շեն պահի,
Ամեն տարի բարով հասնիք,
Ձեզ սիրելով հավասար:
Ամեն.

Չորրորդ ավետիսն էր «Ցնծացեքը», որ
երգվում էր միայն Թոփուի գյուղում և այն
էլ շատ սակավ։ Արդեն 1900 թվականներից
այս ավետիսը գիտցողներ շատ քիչ էին,
շատ «Ավետիսի տներում» դադարել էին
նորեկներին սովորեցնել այդ ավետիսը:

«Ցնծացեքը» երգում էին, տան տերերը
խնդրում էին երգել, այն էլ մյուս ավետիս-
ները երգելուց հետո:

Ցնծացեք և հավատացեք,
Այսօր ցնծում է մեր քրիստոսը
Ցնծա երկինք, ցնծա գետին,
Այսօր աստված երկնելին.
Ցնծա այսօր աստղ և լուսին,
Այսօր ծագաց լույս մեր երկնային,
Ցնծա այսօր ծառ ու ծաղկունք.
Այսօր բլսավ վաշդն իր կուսին.
Ցնծա հրեշտակ, ցնծա մայրիկ.
Այսօր բերին տրտմյալ հովիվին.
Ցնծա ձուկն ի մեջ ծովուն,
Այսօր փորձեց զույգն տերուն,
Ցնծա հայրն, ցնծա մայրն.
Այսօր կուսաց ի տոնս պաշտին,
Ցնծա մեր տեր ի խորանին.
Սարկավազները առաջ բերին,
Ցնծա այսօր սուրբ մարգարե,
Որոնցոց բանն կատարի.
Քեզ երանի, կույս Մարիամ
Աղաղակներ մինըն ծայի,
Կույս հեղասցին որդի ծըննդին
Նա մեծ աստվածորդին
Ավետիսն ալ սուրբ Գաբրիելի
Բան հիշայցին որդին ծըննդի,
Գա Բեթլեհեմ Հրեաստանին
ՋՄիքայել մարգարեին:

Ինչպես տեսնում ենք, շատ խոսքեր
խիստ աղավաղված են, ուստի շատ տողեր
դարձել են անհասկանալի և անիմաստ:

Հինգերորդ ավետիսն էր «Խոսքն աս-
տըծո» կոչվածը, որը երգում էին միայն Մեծ
Սալա գյուղում:

Խոսքն աստծո առաքեցավ
Բնակիլ հարգանդ ի սուրբ կուսին,
Ջոր մարգարեք մտոք տեսին,
Հառաջագույն գուշակեցին:
Հրեշտակապետ, դու Գաբրիել,
Ծրանի տար Մարիամույն:
Քեզ երանի, կույս Մարիամ,
Պիտի ծնանիս աստվածորդին.
Սուրբ Հովհաննես յուր մոր հարգանդ,
Ծրկրպագին զաստվածածին.
Աստղն ելավ ի արևելք,
Հառաջնորդին Բաղդասարին,
Խիստ սքանչելի բաներ եղան
Վասն ամուսյան ճանապարհին.
Ելան, եկան Ծրուսաղեմ,
Որպես նային զաստվածորդին,

Առաջ երթաք ի Բեթլեհէմ,
Մանուկն ծնալ ՚ի քարայրին,
Երեքն միարան մտին, տեսին,
Տղա տեսան ի գիրկն կուսին:
Նոքա տեսին, հավատացին
Եւ հավատով երկրպագին
Թե Հիսուս է, թե Քրիստոս է:
Օրհնած տունիս տանուտերին,
Թե Սառա է, թե Մարիամ է,
Օրհնած տունիս տանտիկիններուն,
Թե Պողոս է, թե Պետրոս է,
Օրհնած տունիս կտրիճներուն:
Աստված զայս տունը շեն պահե,
Շեն պահողին ալ առողջ պահե
Մինչև զալուստն փրկչին:

Վեցերորդ՝ «Այսօր տուն է» ավետիսը երգ-
վում է Մեծ Սալա գյուղում:

Այսօր տուն է ծննդյան
Տյառն մերո և հայտնության,
Այգ արևն արդարության
Երևեցաւ ի մեջ մարդկային,
Այսօր սուրբ կույսն անապական
Ծնալ երբեմն զանմահ արքայն:
Այսօր հրեշտակ երկնքից իջաւ,
Ընդ մեզ օրհնեց զանմահ արքայն,
Այսօր ղժողքն սարսեցաւ,
Գունդք դիվաց հույժ տրտմեցաւ:
Այսօր շարն խնկահերան
Եւ աղամային ուրախացան:
Աստղ մի պայծառ ու պատվական
Երևեցաւ ի Հանդիստան,
Մեծ թագավորք ժողովեցան
Ժողով դսիրք և շատ իշխողք
Աստղն տեսին և զարմացան,
Շատ քննեցին և չիմացան:
Աստղն տեսին և զարմացան,
Եւ զմորենին, որ այնտեղ կա:
Ցնծա՛, ցնծա՛, Դավիթ արքա,

Հնչյա քնարն քո և խայտա
Զոր ասացիր նախագուշակ
Կատարեցաւ հույժ գերանակ,
Թե ի սարա և արաբա
Սուրբ պատարագ բերին նմա:
Ահա իրեք արքա եկին,
Որք երեքյան անվանի—
Մելքոն, Գասպար և Բաղդասար,
Որք ի սարա և արաբա
Ոսկի, կնդրուկ. զմուռս նմա,
Ունին երեք ազնիւ ընծա:
Ոսկին զպատիւն արքայական,
Կնդրուկն՝ զարդ աստվածության,
Զմուռս, որ է անապական—
Նշան թաղման և հարության:
Երկոտասան հազար էին
Հերուսաղեմ քաղաք մտին,
Ի միջ աստղն զկույս տեսին,
Ունեւ ղմեր տերն ի գրկին:
Երուսաղեմ գլորեցաւ,
Երբ զորտամն լսեցին
Հորմե կալլալ Հերովդեսին,
Ապա սիրով արձակես
Ի Բեթլեհէմ ելլալ զնացին,
Խաղային ու խնդային:
Զնվազարանս հնչեին.
Տեսին Հովսեփի և ՂՄարիամ,
Ցանե նոցա փախուստ առին⁸:

Ավետիսները այժմ մոռացված են:
1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը
փոխեց ժողովրդի կյանքը, առհավետ չքացան
հին կարգերը. փտկվեցին «ավետիսի տները»,
նրանց տեղը հիմնվեցին կոմերիտասարգների
ակումբները, «մասալ ասողների» աեղը
բռնեցին ուսլալ դասախոսները, երվեցիկ
խմբերը և այլ կուլտուրական գործոն ուժերը:

⁸ Այս ավետիսը ասել է մեզ Մեծ Սալա գյուղի
նախկին բնակիչ Օհան Դոմրայանը. տպագրվում է ա-
ռաին անգամ: